ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով կենտրոնական ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-Ջ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.11.2017թ. ժամը 10:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-Ջ-17/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Հ. Քոչարի փ.16/1 26)**
2. **«Իմէքս Գրուպ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան 25)**
3. **«ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Քոչարյան 4/2)**
4. **«ԲԱՍՊԵՏ» ՍՊԸ (ՀՀ, Տավուշի մարզ, գ. Գետահովիտ)**
5. **«Անդրեասյանշին» ՍՊԸ (ՀՀ, Լոռու մարզ,ք. Վանաձոր, Տավրոս 4 փող 2 նրբ. 11/1տն)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ **«Իմէքս Գրուպ» ՍՊԸ-ի:**

«Իմէքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում նշվել է, որ ընկերությունը մասնակցում է երկու չափաբաժիններին, սակայն երկրորդ չափաբաժնի Հավելված 4՝ գնային առաջարկը և Հավելված 3 որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը Armeps.am համակարգում կցված չեն:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան,

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
			«ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ» ՍՊԸ	**«Իմէքս Գրուպ» ՍՊԸ**	**«ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ**	**«ԲԱՍՊԵՏ» ՍՊԸ**	**«Անդրեաս յանշին» ՍՊԸ**
1	**ՀՀ, Տավուշի մարզ քաղաք Իջևան, Մելիքբեկյան 3 հասցեում գտնվող վարչական շենքում կենտրոնական ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքներ**	2017000	2083500	1680638	1890000	2972600	2269575
2	**ՀՀ, Տավուշի մարզի քաղաք Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի 3 հասցեում գտնվող վարչական շենքում կենտրոնական ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքներ**	966000	1083500	-	810000	2084400	1039500

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

Մասնակիցների առաջարկած գները ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«Իմէքս Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2017թ. նոյեմբերի 28-ին, ժամը 10:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Մ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով կենտրոնական ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-Ջ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.11.2017թ. ժամը 10:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դանիելյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

1. Միաժամանակյա բանակցությունների մասին

<<ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ>> ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի համար ներկայացրել է նոր գնային առաջարկ, համաձայն որի ընդանուր գինը նվազեցվել է 6000 ՀՀ դրամով՝ կազմելով **966000** (ինը հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն (առանց ԱԱՀ՝ **805000** (ութ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ):

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«Իմէքս Գրուպ» ՍՊԸ** –ին,
2 չափաբաժնի համար **«ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ» ՍՊԸ** –ին,
2 չափաբաժնի համար **Անդրեասյանշին ՍՊԸ** –ին,

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 10.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Մ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան